Social Security

Ձեր Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի համար Հավելյալ օգնության (Extra Help) ըմբռնումը

2013թ.

www.socialsecurity.gov

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի ծախքերի համար դիմել Հավելյալ օգնության.
- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- Գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- ծանոթանալ Ձեր Social Security Statement (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- Գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Բովանդակություն

Ի՞նչ է Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի ծախքերի համար Հավելյալ օգնությունը 4

Աղբյուրներ և եկամուտ 4

Հավելյալ օգնության համար դիմելը 7

Եթե Ամերիկյան հնդիկ կամ Բնիկ ալասկացի եք 10

Եթե ընտանիքի անդամ, խնամող կամ ուրիշ երրորդ կողմ եք 10

Ինչպե՞ս ընտրել մի որոշակի ծրագիր 11

Նահանգային գործակալությունները կարո՞ղ են օգնել Մեդիկերի ծախքերին 12

Որոշումը բողոքարկելը 13

Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություն ստանալ 15

Ի՞նչ է Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի ծախքերի համար Հավելյալ օգնությունը

Մեդիկեր ունեցող որևէ անձ կարող է ստանալ Մեդիկերի դեղատոմսային դեղերի ապահովագրություն: Սահմանափակ աղբյուրներ և եկամուտ ունեցող որոշ անձինք թերևս կարողանան ծախքերի համար Հավելյալ օգնություն (Extra Help) ստանալ՝ ամսական ապահովագներ, տարեկան հանելիներ և դեղատոմսերի համավճարներ, որոնք կապ ունեն Մեդիկերի դեղատոմսային դեղերիծրագրի հետ: Հավելյալ օգնությունը նախատեսվում է որ կազմի տարեկան շուրջ $4,000: Շատ անձինք որակավորվում են այս խոշոր խնայողությունների համար և նույնիսկ անգիտանում են այն: Իմանալու համար, որ արդյո՞ք դուք որակավորվում եք, Սոցիալական ապահովությունը պետք է իմանա ձեր խնայողությունների, ներդրումների, անշարժ գույքի (ձեր բնակարանից բացի) և ձեր եկամտիարժեքը: Մեզ տեղեկություն է հարկավոր ձեր և ձեր ամուսնու/կնոջ մասին՝ եթե ամուսնացած եք և բնակվում եք միասին:

Օգնելու համար, որ Սոցիալական ապահովությունը վճռի ձեր իրավասությունը Հավելյալ օգնության, պետք է լրացնեք *Դեղատոմսով բաց թողնվող դեղերի Medicare-ի պլանի ծախսերը հոգալու համար Հավելյալ օգնություն ստանալու դիմում* (SSA-1020 ձևաթուղթ):Սոցիալական ապահովությունը կօգտագործի ձեր դիմումնագրով ներկայացրած տեղեկությունը:

Աղբյուրներ և եկամուտ

Ո՞րն է աղբյուրի սահմանը

Հավելյալ օգնության որակավորվելու համար, ձեր աղբյուրները պետք է սահմանափակվեն $13,300-ով անհատի համար կամ $26,580-ով՝ միասին բնակվող ամուսնացած զույգի համար:

Աղբյուրներն ընդգրկում են ձեր սեփականությունը կազմող իրերի արժեքը: Օրինակ՝

- Անշարժ գույք (բացի ձեր հիմնական բնակարանից).
- Դրամատան հաշիվներ, ներառած՝ վճարագրային, խնայողական և ավանդի վկայագրի (CD) հաշիվները.
- Բաժնետոմսեր.
- Պարտատոմսեր, ներառած՝ ԱՄՆ խնայողական պարտատոմսերը.
- Փոխադարձ հիմնադրամներ.
- Անհատական պաշտոնաթողության հաշիվներ (IRA). և
- Կանխիկ՝ տանը կամ այլուր:

Ի՞նչը որպես աղբյուր հաշվի չի առնվում

Մենք հաշվի չենք առնում՝

- Ձեր հիմնական բնակարանը.
- Ձեր անձնական ստացվածքը.
- Ձեր մեքենան/մեքենաները.
- Աղբյուրներ, որոնք հեշտությամբ չեք կարող կանխիկի վերածել, ինչպես՝ զոհարեղենը կամ տան կահույքը.
- Սեփականություն, որը ձեզ անհրաժեշտ է ինքնաբավության համար, ինչպես՝ վարձով տրված ունեցվածքը կամ հողաշերտը, որն օգտագործում եք տնային սպառման համար բույսեր աճեցնելու նպատակով.
- Ոչ-գործարարական սեփականություն, որն անհրաժեշտ է ձեր ինքնաբավության համար.
- Կյանքի ապահովագրության ապահովագրեր.
- Թաղմանական ծախքեր.
- Ճահ, որը վաստակում եք թաղմանական ծախքերի համար օգտագործելի փողից. և
- Ուրիշ տեսակի որոշակի պահված փող, որը հաշվի չի առնվում ինն ամսով, ինչպես՝
  - — Հետադարձ Սոցիալական ապահովության կամ Լրացուցիչ ապահովության եկամտի (SSI) վճարումներ.
  - — Բնակարանային օժանդակություն.
  - — Հարկային փոխատվություններ և փոխհատուցումներ, որոնք առնչվում են վաստակված եկամտի հարկի վարկերի և երեխայի հարկի վարկերի հետ.
  - — Փոխհատուցում, որն ստանում եք որպես ոճրի զոհ. և
  - — Նահանգային կամ տեղական կառավարության կողմից վերաբնակեցման օժանդակություն:

Աղբյուրների այլ բացառությունների համար դիմեք Սոցիալական ապահովության:

Ո՞րն է եկամտի սահմանը

Հավելյալ օգնության որակավորվելու համար, ձեր աղբյուրները պետք է սահմանափակվեն $17,235-ով անհատի համար կամ $23,265-ով՝ միասին բնակվող ամուսնացած զույգի համար: Նույնիսկ եթե ձեր տարեկան եկամուտն ավելի բարձր է, թերևս կարողանաք որոշ օգնություն ստանալ: Հավասիկ մի քանի օրինակներ, որտեղ ձեր եկամուտը կարող է ավելի բարձր լինել, եթե դուք կամ ձեր ամուսինը/կինը՝

- Աջակցում եք ընտանիքի ուրիշ անդամների, որոնք բնակվում են ձեզ հետ.
- Հասույթ ունեք աշխատանքից. կամ
- Բնակվում եք Ալասկայում կամ Հավայիում:

Ի՞նչը հաշվի չի առնվում որպես եկամուտ

Բոլոր կանխիկ վճարումները չէ, որ համարվում են եկամուտ: Օրինակ,**մենք հաշվի չենք առնում՝**

- Լրացուցիչ սննդի օգնության ծրագիրը (սննդադրոշմներ).
- Բնակարանային օժանդակությունը.
- Տնային էներգիայի օժանդակությունը.
- Բժշկական դարմանումները և դեղերը.
- Աղետային օժանդակությունը.
- Վաստակված եկմատի հարկային վարկի վճարումները.
- Ձեր ընտանիքի ծախքերը հոգալու համար ուրիշների ընծայած օժանդակությունը.
- Զոհերի փոխհատուցման վճարումները. և
- Կրթաթոշակներն ու կրթանպաստները:

Եկամտի այլ բացառությունների համար դիմեք Սոցիալական ապահովության:

Հավելյալ օգնության համար դիմելը

Ինչպե՞ս դիմել

Հավելյալ օգնության համար դիմելը հեշտ է: Պարզապես լրացրեք *Դեղատոմսով բաց թողնվող դեղերի Medicare-ի պլանի ծախսերը հոգալու համար Հավելյալ օգնություն ստանալու դիմում* (SSA-1020 ձևաթուղթ): Ահա թե ինչպես՝

- Դիմեք առցանց՝ ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքէջում.
- Զանգահարեք Սոցիալական ապահովություն **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) համարով՝ հեռախոսով դիմելու կամ դիմումնագիր խնդրելու համար. կամ
- Դիմեք ձեր տեղական Սոցիալական ապահովության գրասենյակում:

Դիմելուց հետո, Սոցիալական ապահովությունը կվերանայի ձեր դիմումը և նամակով ձեզ կտեղեկացնի՝ եթե որակավորվում եք Հավելյալ օգնության համար: Որակավորվելուց հետո, կարող եք ընտրել Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագիրը: Եթե ծրագիր չընտրեք, Մեդիկերի և Մեդիկեյդի ծառայությունների կենտրոնները (Centers for Medicare & Medicaid Services) այն կընտրի ձեզ համար: Ինչքան շուտ միանաք ինչ-որ ծրագրի, այնքան շուտ կսկսեք նպաստներ ստանալ:

Եթե իրավասու չեք Հավելյալ օգնության, թերևս այնուամենայնիվ կարողանաք գրանցվել Մեդիկերի դեղատոմսային դեղերի մի ծրագրի: Գրանցման ժամանակաշրջանների մասին տեղեկության համար այցելեք ***www.medicare.gov*** կայքէջը կամ զանգահարեք **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**. TTY **1-877-486-2048**):

Ինչու՞ պետք է առցանց դիմեմ

Մեր առցանց դիմումնագիրը ապահով է և ունի մի շարք առավելություններ: Այն ձեզ քայլ առ քայլ առաջնորդում է գործընթացի միջով՝ մի շարք ինքնօգնության էկրաններով: Էկրանները ձեզ կբացատրեն, թե ինչպիսի տեղեկության պետք ունեք դիմումնագիրն ամբողջացնելու համար, և ձեզ ուղղություն կտան, որպեսզի լրիվ պատասխան տաք հարցերին: Կարող եք ցանկացած համակարգիչի միջոցով դիմել ձեզ հարմար ընթացքով: Կարող եք սկսել և կանգ առնել գործընթացի ընթացքում ցանկացած ժամանակ, որպեսզի կարողանաք դիմումնագրից հեռանալ և ավելի ուշ վերադառնալ՝ այն թարմացնելու կամ որևէ պահանջված տեղեկություն լրացնելու համար: Մենք ուշադիր ենք, որ պաշտպանվի ձեր անձնական տեղեկությունը:

Ի՞նչ պետք է իմանամ

Դիմումնագրի հարցերի մեծ մասը վերաբերվում է աղբյուրների և եկամտի: Եթե ամուսնացած եք և ձեր ամուսնու/կնոջ հետ եք բնակվում, մեզ հարկավոր է այդ տեղեկությունն իմանալ երկուսիդ համար: Ընտանիքի անդամները, խնամողները և ուրիշ երրորդ կողմեր կարող են օգնել, որ լրացնեք դիմումնագիրը: Օգտագործեք հաջորդ էջում գտնվող սևագրության թերթիկը, որ որոշեք արդյո՞ք իրավասու եք: Այն ձեզ կօգնի, որ լրացնեք իսկական դիմումնագիրը Հավելյալ օգնության համար: Սևագրության թերթիկը դիմումնագիր չէ:

Պատրաստվելու համար՝

- Նշեք ձեզ առանձնաբար և ձեր ամուսնու/կնոջ, կամ ուրիշի հետ պատկանող իրերը, բայց մի ընդգրկեք ձեր բնակարանը, մեքենաները, գերեցմանահողերը, կյանքի ապահովագրության ապահովագրերը կամ անձնական ունեցվածքները:
- Վերանայեք ձեր ողջ եկամուտը:
- Առաջուց հավաքեք ձեր արձանագրությունները՝ ժամանակ խնայելու համար:

Ձեզ անհրաժեշտ արձանագրությունները՝

- Տեղեկագրեր, որոնք ցույց են տալիս ձեր հաիվների հաշվեկշիռները դրամատանը, կրեդիտ յունիոններում կամ ուրիշ ֆինանսական հիմնարկներում.
- Ներդրումների տեղեկագրերը.
- Արժեթղթերի վկայականները.
- Հարկային հայտարարագրերը.
- Կենսաթոշակի հատկացման նամակները. և
- Աշխատավարձի կտրոնները:

Մենք ձեր ներկայացրած տեղեկությունը հիմնավորող ապացույց չենք պահանջի, բայց ձեր տեղեկությունը կբաղդատենք ուրիշ կառավարական գործակալությունների մոտ առկա տվյալների հետ: Մենք այդ տեղեկությունը կբաղդատենք, որպեսզի վստահ լինենք նրա ճշգրտությանը:

Մեզ հարկավոր է տեղեկություն իմանալ ձեր (և ձեր ամուսնու/կնոջ, եթե ամուսնացած եք և միասին եք բնակվում) աղբյուրների և եկամտի մասին՝

Աղբյուրներ	Արժեք
Դրամատան հաշիվներ, ներառած՝ վճարագրային, խնայողական և ավանդի վկայագրի (CD) հաշիվները	$ _____
Բաժնետոմսեր, պարտատոմսեր, փոխադարձ հիմնադրամներ, անհատական պաշտոնաթողության հաշիվներ (IRA), կամ ուրիշ ներդրումներ	$ _____
Կանխիկ՝ տանը կամ այլուր	$ _____
Ձեր բնակարանից բացի որևէ անշարժ գույք	$ _____

Եկամուտ	Ամսական գումար
Սոցիալական ապահովության նպաստներ	$ _____
Երկաթգծի պաշտոնաթողության նպաստներ	$ _____
Վետերանների նպաստներ	$ _____
Այլ կենսաթոշակներ և տարեվճարներ	$ _____
Ալիմոնի	$ _____
Վարձքի զուտ եկամուտ	$ _____
Աշխատավորի փոխհատուցում	$ _____
Ուրիշ եկամուտ (օրինակ՝ գործազրկությունից, մասնավոր կամ նահանգային հաշմանդամության վճարումներ)	$ _____

Եկամուտ	Տարեկան գումար
Աշխատավարձեր	$ _____
Զուտ հասույթ՝ ինքնազբաղությունից	$ _____

Եթե Ամերիկյան հնդիկ կամ Բնիկ ալասկացի եք

5-ից 6-րդ էջերը ներկայացնում են ցանկը որոշակի աղբյուրների և եկամտի, որոնք հաշվի չեն առնվում աղբյուրների և եկամտի սահմանի համար՝ Հավելյալ օգնության կապակցությամբ: Ամերիկյան հնդիկներն ու Բնիկ ալասկացիները թերևս ունենան բացառելի այլ աղբյուրներ և եկամուտներ:

Օրինակ, Սոցիալական ապահովությունը հաշվի չի առնի հետևյալ աղբյուրներն ու եկամուտը՝

- Որոշակի բաշխումներ, որոնք Բնիկ ալասկացին ստանում է Ալասկայի բնիկ շրջանային և գյուղական կորպորացիայից.
- Անհատ հնդիկի կամ Ցեղախմբի համար ԱՄՆ-ի կողմից խնամագրում ի պահ դրված հողաշերտ.
- Ներքին գործերի նախարարի կողմից խնամագրում ի պահ դրված դրամամիջոցներ՝ հնդիկների Ցեղախմբի համար, որոնք ըստ շնչի բաժանվում են Ցեղախմբի յուրաքանչյուր անդամի
- Հնդիկի կողմից ստացված տարեկան մինչև $2,000, որն առաջացել է խնամագրերում կամ արգելված հողատարածքներում գտնվող անհատական շահերից. և
- Ըստ դաշնային օրենսդրության, հատուկ հնդիկների Ցեղախմբի անդամներին կատարվող վճարումներ:

Աղբյուրների և եկամտի այլ բացառությունների համար դիմեք Սոցիալական ապահովության:

Եթե ընտանիքի անդամ, խնամող կամ ուրիշ երրորդ կողմ եք

Կարող եք օգնել, որ Մեդիկերի նպաստառուները իրենց Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի ծախքերի համար դիմեն Հավելյալ օգնության: Եթե որևէ անձի օգնեք իր դիմումնագրի կապակցությամբ, դուք հարցերին պետք է պատասխանեք այնպես, կարծեք դուք հարցերին պատասխանող մյուս անձն եք: Ստուգելու համար որևէ անձի իրավասությունը, Սոցիալական ապահովությունը պետք է իմանա արժեքը նրա խնայողությունների, ներդրումների, անշարժ գույքի (բնակարանից բացի), ինչպես նաև եկամտի: Մեզ հարկավոր է տեղեկություն ձեր օգնած անձի, ինչպես նաև նրա ամուսնու/կնոջ մասին, եթե նրանք ամուսնացած են և բնակվում են միասին: 8-րդ էջի տեղեկությունն ու 9-րդ էջի սեւագրության թերթիկը կարող են ձեզ օգնել դիմումնագրի կապակցությամբ:

Կարող եք որևէ անձի օգնել, որ առցանց դիմի Հավելյալ օգնության համար, այցելելով մեր կայքէջը կամ ցանգահարելով մեր անվճար հեռախոսահամարով և խնդրելով *Դեղատոմսով բաց թողնվող դեղերի Medicare-ի պլանի ծախսերը հոգալու համար Հավելյալ օգնություն*

ստանալու դիմում (SSA-1020 ձևաթուղթ): Օգնության համար կարող եք նաև այցելել ձեր տեղական Սոցիալական ապահովության գրասենյակը:

Ինչպե՞ս ընտրել մի որոշակի ծրագիր

Այցելեք ***www.medicare.gov*** կայքէջը և հետևյալների օգնությամբ որոշեք՝

- **Բաղդատեք Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրերը՝** Կարող եք գտնել և բաղդատել ձեր նահանգի դեղատոմսային դեղերի ծրագրերը, որոնք համապատասխանում են ձեր անձնական կարիքներին, և գրանցվել ձեր ընտրած դեղատոմսային դեղերի ծրագրին:
- **Դեղացանկի որոնիչ՝** Կարող եք ձեր ընդունած որոշակի դեղերի մասին տեղեկություն մուտքագրել և ստանալ տեղեկություն, որը կօգնի գտնել ձեր նահանգի այն ծրագրերը, որոնք համապատասխանում են ձեր դեղատոմսային դեղերի կարիքներին:

Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրերի և մասնավոր գրանցման ժամանակաշրջանների մասին ավելին իմանալու համար խնդրվում է այցելել ***www.medicare.gov*** կամ զանգահարել **1-800-MEDICARE** համարով:

Ինչպիսի՞ գործոններ պետք է նկատի առնեմ Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի ընտրանքները բաղդատելիս

Ապահովագրություն՝ Մեդիկերի դեղերի ծրագրերը կապահովագրեն քիմիական անունով (ջեներիկ) և առևտրանշով դեղերը:Ծրագրերի մեծ մասը կունենա մի դեղացանկ, որը ցուցակն է ծրագրի կողմից ապահովագրված դեղերի: Ծրագրի կողմից ապահովագրված դեղերը կարող են փոխվել, սակայն ցանկը միշտ կհամապատասխանի Մեդիկերի պահանջմունքներին:

Ծախք՝ Ամսական ապահովագները և դեղատոմսային դեղերի ձեր ծախքաբաժինը կտարբերվի՝ նայած ձեր ընտրած ծրագրի: Եթե որակավորվում եք Հավելյալ օգնության համար, քանի որ ունեք սահմանափակ աղբյուրներ և եկամուտ, դուք օգնություն կստանաք ծախքերի մի մասի կամ ամբողջության համար:

Հարմարավետություն՝ Դեղերի ծրագրերը պայմանագիր պետք է կնքեն ձեր տարածքում գտնվող դեղատների հետ: Ծրագրից ստուգեք, որպեսզի վստահ լինեք, որ ծրագրի դեղատները հարմար են ձեզ համար:

Ինչպե՞ս միանալ Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրին

- **Ծրագրի կայքէջում՝** Այցելեք դեղերի ծրագրի ընկերության կայքէջը: Թերևս կարողանաք առցանց միանալ նրան:
- **Մեդիկերի կայքէջում՝** Միացեք դեղերի ծրագրի ***www.medicare.gov*** կայքէջում, օգտագործելով Մեդիկերի առցանց գրանցման կենտրոնը:
- **Թղթյա դիմումով՝** Կապ հաստատեք ձեր ընտրած ընկերության հետ, որն առաջարկում է դեղերի ծրագիրը, և դիմումնագիր խնդրեք: Ձևաթուղթը լրացնելուց հետո, այն փոստով կամ ֆաքսով վերադարձրեք ընկերության:
- **Հեռախոսով՝**Զանգահարեք ծրագրին կամ զանգահարեք **1-800-MEDICARE** համարով և զրուցեք հաճախորդի սպասարկման ներկայացուցչի հետ:

Նահանգային գործակալությունները կարո՞ղ են օգնել Մեդիկերի ծախքերին

Հավելյալ օգնության համար ձեր դիմումը ներկայացնելիս, դուք կարող եք նաև սկսել Մեդիկերի Խնայողական ծրագրերի համար ձեր դիմումի գործընթացը:Այս նահանգային ծրագրերն օգնություն են ընծայում ուրիշ Մեդիկերի ծախքերի համար: Սոցիալական ապահովությունը տեղեկություն կուղարկի ձեր նահանգին, բացի եթե դուք մեզանից խնդրեք այդպես չանել ձեր Հավելյալ օգնության դիմումի մեջ: Ձեր նահանգը կապ հաստատելով կօգնի, որ դիմեք Մեդիկերի Խնայողական ծրագրի:

Այս Մեդիկերի Խնայողական ծրագրերն օգնում են սահմանափակ աղբյուրներ և եկամտային վճարումներ ունեցողներին իրենց Մեդիկերի ծախքերի կապակցությամբ: Մեդիկերի Խնայողական ծրագրերն օգնում են ձեր Մեդիկերի Բ մասի (բժշկական ապահովագրություն) ապահովագները վճարելուն: Որոշ անձանց պարագային, Մեդիկերի Խնայողական ծրագրերը թերևս նաև օգնեն վճարել Մեդիկերի Ա մասի (հիվանդանոցային ապահովագրություն) ապահովագները, եթե կան այդպիսիք, ինչպես նաև Ա մասի և Բ մասի հանելիներն ու համավճարները:

Ի՞նչ կարող եմ անել, եթե համաձայն չեմ իմ իրավասությունը վճռելու համար օգտագործված տեղեկության հետ

Սոցիալական ապահովությունը ձեզ նախա-վճռային ծանուցագիր կուղարկի՝ եթե մեր արձանագրություններում գտնվող տեղեկությունը ցույց է տալիս, որ իրավասու չեք Հավելյալ օգնության: Եթե ծանուցագիրը չեք հասկանում, մեզ զանգահարեք**1-800-772-1213** համարով և մենք այն կբացատրենք ձեզ: Եթե համաձայն չեք մեր ունեցած տեղեկության հետ, զանգահարեք վերևի համարով կամ այցելեք ձեր տեղական Սոցիալական ապահովության գրասենյակ՝ նախա-վճռային ծանուցագիրն ստանալուց մինչև 10 օր հետո, և մեզ ներկայացրեք ճշգրիտ տեղեկությունը:

Մենք ձեզ վերջնական վճիռ կուղարկենք՝ եթե 10 օրվա ընթացքում մեզ ոչ մի լրացուցիչ տեղեկություն չներկայացնեք: Այն ձեզ կբացատրի ինչ անել, եթե համաձայն չլինեք վերջնական վճռի հետ: Մենք սա կոչում ենք բողոքարկում:

Ինչպե՞ս կարող եմ բողոքարկել Հավելյալ օգնության համար իմ դիմումի վերաբերյալ տրված վերջնական վճիռը

Եթե ուզում եք բողոքարկելՄեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրի ծախքերի համար Հավելյալ օգնության իրավասության կապակցությամբ Սոցիալական ապահովության կողմից տրված վճիռը, մեր կայքէջն այցելելով կամ մեզ զանգահարելով խնդրեք *Appeal of Determination for Extra Help with Medicare Prescription Drug Plan Costs* (SSA-1021 ձևաթուղթ): Խնդրանքը կարող եք փոստով ուղարկել այստեղ՝ Wilkes-Barre Data Operations Center, P.O. Box 1030, Wilkes-Barre, PA 18767-1030: Կարող եք նաև այցելել ձեր տեղական Սոցիալական ապահովության գրասենյակ:

Ի՞նչ կպատահի երբ բողոքարկեմ

Երբ բողոքարկում խնդրեք, մենք ձեզանից կխնդրենք մեզ ասել, թե ինչու եք կարծում, որ մեր որոշումը սխալ է: Սովորաբար, մենք ժամադրություն կնշանակենք լսումի համար, որպեսզի ձեր գործը ձեզ հետ վերանայենք հեռախոսով:Լսումի ժամադրությունը նշանակելու համար, մենք ձեզանից կխնդրենք երկու նախընտրելի ժամեր, որպեսզի ձեզ զանգահարենք: Այնուհետև, մենք ձեզ կուղարկենք լսումի ժամադրության ծանուցագիր, որը ձեզ կներկայացնի ձեր լսումի համար նշանակված ժամն ու ամսաթիվը:

Եթե որոշեք չմասնակցել հեռախոսային լսումին, մենք ձեր գործի վերաբերյալ որոշում կանցկացնենք հիմնվելով մեզ մոտ գտնվող թղթածրարի և ձեր կողմից տրված նոր տեղեկության վրա, վստահ լինելու համար, որ ճիշտ որոշումն ենք տալիս: Մենք սա կոչում ենք գործի վերանայումով լսում:

Անկախ ձեր հեռախոսով լսում կամ գործի վերանայումով լսում խնդրելուց, մենք ձեզ կուղարկենք մի ուրիշ նամակ՝ անմիջապես որ ամբողջացնենք ձեր հայցի վերաբերյալ անհրաժեշտ աշխատանքը:

Արդյոք ժամկետ կա՞ բողոքարկման համար

Մեր որոշումը ձեզ տեղեկացնող ծանուցագիրն ստանալու ամսաթվից հետո բողոքարկում խնդրելու համար դուք ունեք 60 օր: Եթե 60-օրյա ժամկետում չբողոքարկեք, հնարավոր է, որ կորցնեք բողոքարկելու ձեր իրավունքը և մեր տված որոշումը կդառնա վերջնական: Եթե տվյալ ժամկետում ձեր գործի կապակցությամբ չբողոքարկելու բանավոր պատճառ ունեք, հնարավոր է, որ ձեզ ավելի ժամանակ ընծայենք: Երկարաձգումը կարող եք խնդրել զանգահարելով **1-800-772-1213** համարով:

Բողոքարկում խնդրելու համար կարո՞ղ եմ օգնություն ստանալ

Կարող եք ընտրել, որ մեկ ուրիշը օգնի ձեր բողոքարկմանը կամ ներկայացնի ձեզ: Ձեր ներկայացուցիչը կարող է դատապաշտպան կամ ձեզ ծանոթ և Սոցիալական ապահովության լավատեղյակ այլ որակյալ անձ լինել: Մենք ձեր ներկայացուցչի հետ կգործենք ճիշտ այնպես, ինչպես կգործեինք ձեզ հետ: Նա կարող է ձեր անունով գործել Սոցիալական ապահովության խնդիրների մեծ մասի կապակցությամբ:

Ի՞նչ անել, եթե համաձայն չեմ որոշման հետ

Եթե համաձայն չեք ձեր բողոքի վերաբերյալ Սոցիալական ապահովության տված որոշման հետ, կարող եք դատական գործ հարուցել դաշնային շրջանային դատարանում: Ձեր բողոքի վերաբերյալ մեր կողմից ձեզ ուղարկված նամակը ևս ձեզ տեղեկություն կտա ձեր գործի վրա դատարանի ուշադրությունը հրավիրելու մասին:

Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություն ստանալ

Ձեր Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրով Հավելյալ օգնություն ստանալու մասին լրացուցիչ տեղեկության համար այցելեք ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքէջը կամ զանգահարեք Սոցիալական ապահովություն: Սոցիալական ապահովության ներկայացուցիչները պատրաստ են օգնելու, որ լրացնեք ձեր դիմումը: Ինչքան շուտ դիմեք, այնքան շուտ կսկսեք նպաստներն ստանալ:

Եթե ձեզ տեղեկություն է հարկավոր Մեդիկերի Խնայողական ծրագրերի, Մեդիկերի դեղատոմսային դեղերի ծրագրերի կամ ծրագրին ինչպես գրանցվելու մասին, կամ *Medicare & You* հրատարակության օրինակը խնդրելու համար, խնդրվում է այցելել ***www.medicare.gov*** կայքէջը կամ զանգահարել **1-800-MEDICARE** համարով: Ձեր Նահանգային առողջապահական ապահովագրության խորհրդատվության և օգնության ծրագիրը (State Health Insurance Counseling and Assistance Program, SHIP) նույնպես կարող է պատասխանել ձեր Մեդիկերի հարցերին: Ձեր տեղական SHIP-ի կապի տեղեկությունը կարող եք գտնել ձեր Մեդիկերի տեղեկագրքի հետևը, առցանց՝***www.medicare.gov*** կայքէջում, կամ զանգահարելիս այն խնդրելով:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10508-AM
Understanding The Extra Help With Your Medicare Prescription Drug Plan (Armenian)
March 2013